

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

**ԳՀՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ**

**Պատմական զիտութիւնների թեկնածու**

### **ՍՐԲԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱԼԵՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ**

Մեր մատենագրութեան «Արքախօսական» ճիշդ-մասը թէ՝ լաւ հրատարակուած և թէ՝ համարեա ուսումնասիրուած չէ: Այսպէս. ունենք «Վկայաբանք» («Մարտիրողով») անոնվ յալտնի բաւական հնաւանդ ձեռագիր ժողովածուներ<sup>1</sup>, բովանդակութեամբ սրանց բաւական մօտ հարիւրատոր Շառընտիրներ, ապա՝ թայամատորքի՝ այս երկուսից մեծապէս օգտուած տասնեակ խմբագրութիւնների երեսի թէ հազարի հասնող օրինակութիւններ<sup>2</sup>: Այս ժողովածուների թէ՝ Անդքին առնչութիւն-կապների, թէ՝ Արանց պարունակած ճիթ-միատրների արժէքի, հաւատակութեան կամ հաւատուի մաս-տարրերի և թէ՝ աղբիւրագիտական-պատմագիտական այլ արժանիքների վերաբերմամբ մեր պատկերացուները բաւական աղոտ են: Ուրախութեամբ արձանագրելով, որ բոլորովին վերջերս հրատարակուեց այս բացը մասամբ լրացնող մի օգտակար աշխատանք<sup>3</sup>, պէտք է ընդունենք, որ սա սուկ կարող էր լիմեն և է՛ գիտական գրականութեան մէջ դիպուածով արձանագրուած իրողութիւնների ամփոփոյք: Սակայն այս գործը սկզբանակէտ դարձնելով և Արանով առաջնորդուելով, արժէ խնդիրը ծրագրուած ձեւով և հիմնատոր ուսումնասիրներ իր բոլոր դրսեւրումներով՝ մատենագրական նիւթ, որոշակի մասունք, Արա տեղաշարժեր, պաշտամունք (աւելացնելով ազգագրական նիւթը) և պատմութեան ընթացքում խաղացած դեր:

Այս խնդիրը կարեւոր ենք համարում ո՞չ միայն և ո՞չ այնչափ գիտական, որչափ՝ կիրառական տեսակէտից: Սրբերի մասունքների և հրաշագործ առարկաների (յատկապէս՝ Աւետարանի որոշակի ձեռագիր օրինակների) պաշտամունքը, ինչպէս համաքրիստոնէական, նոյնպէս և հայ հրականութեան մէջ եղել է բոլոր ժամանակներում, ուստի և մեր ազգային-եկեղեցական կեանքի վերակազմակերպ-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Եղեամի Մաշտոցեամ Մատենադարանի ձեռ. 1522, 3777 և այլն:

<sup>2</sup> Նոյնակի բազոքներ ցրուած են Առև տարարմոյք Անդքերի հազարատոր ժողովածուների մէջ:

<sup>3</sup> Եարտընեան Հ. Տաճատ, Հայաստանի վանքերում և Եկեղեցիներում մէջ պահուած սուրբերու մասունքներ և սրբազն առարկաներ.- Բազմավէա, 2000, թի 1-4, էջ 128-61:

ման, աւելի ճիշտ՝ ի նորոյ կազմակերպման համար այդ պաշտամունքի վերականգնում ամենաեն չի կարող ժամանակավորեալ համարութիւն: Հակառակը՝ Վատահ ենք, որ, ի հետուկս մարդորս աղամդերի, այն պէտք է, իրօք, աւելի առինքնող ու գրահիշ դարձնի Հայ Եկեղեցին, որով եւ անպայման նպաստերու է մեր ազգային-պետական նպատակների յատակեցմանն ու նրանց վերաբերող ծրագրերի իրականացմանը:

Հարցի կարեւորութեան այս հէնքի վրայ հեղինակի բարեհաճ համաձայնութեամբ ամերածնչտ դիտեցինք հայերենով «Էջմիածին» ամսագրում հրատարակուած տեսմենի Խզարէլ Օժէի<sup>4</sup> յաջորդող յօդուածը, որ նա զեկուցեց Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն Բոշակեու 1700-ամեայ յորելեանի միջոցառումների շարքում Խոտալիայի Լէչչէ քաղաքի համալսարանի Հոռմի պատմութեան ամբիոնի վարիչ, հայագէտ, պրոֆեսոր Չուստոյ Տրավինայի նախաձեռնութեամբ Լէչչէ եւ Նարդոյ<sup>5</sup> քաղաքներում 2001 թ. հոկտեմբերի 19-20ին կայացած՝ «Հայ սուրբ Գրիգոր եւ նրա պաշտամունքը հարավային Խոտալիայում» գիտաժողովում:

Յօդուածի քննութեան առարկան մեր «մատունքային» գրականութեան հին միաւորմերից մէկն է, «Ծաղընտրային» Ակլթ, որ Հ. Ղ. Ալիշանը գտել է ըստ ամենայնի Վեհետիկի Միհեթարեան մատենադարանի «ԺԲ դարու հին ճաղընտրաց մէջ»<sup>6</sup>, նրա հնուհակ Պանդակէոնին «ի շարս պատմչաց դասել»ու համար գործն արժեորել է, շեշտել, որ «որչափ եւ վիպասանական հիստուած մի երեսի այս, անտարակոյն ստուգութեամ հիմ մը ունի», որով եւ հայկական այլ աղրիւներով հաստատում է, որ, իրօք, Տուրութեամի Կոգովիտ գաւառի Գոմ Բծրայր թնակավայրում եղել եւ պաշտուել է Պետրոս առաքեալի մասունք «սողայագոյն մատու»<sup>7</sup> ճկոյթը: Եզրափակելով, որ թէել Յայսմատուրքների մէջ այս պատմութիւնը նշանակուած է Մայիսի 24ին<sup>8</sup>, սակայն «Պանդակէոնի գրածն սակաւագիտ ըլլալով», նրա արժեքի համեմատ է՝ ամբողջութեամբ կամ մասամբ<sup>9</sup> հրատարակել է ձեռագրակամ՝ «Գիւտ մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի՝ թէ զիարդ եղել կատարումն կամ որպէս բերա ի Հայոց» խորագրով<sup>10</sup>. ծանօթ է եղել ձեռագիր այլ օրինակների եւս՝ «Ծոխաբանութեամբ գրուած է, բայց եւ եռամդեամբ եւ վայելու ձեռագիր օրինակը այլ իրարմէ աւելցուել պակսեցուցեր են»<sup>10</sup>:

<sup>4</sup> Մոմպէլիէ համալսարանի պրոֆեսոր, Կիլիկեան Հայաստանի սկզբանարման շրջամի մահապրկիս և հմուտ հետազոտող՝ պրոֆեսոր Ժերար Շտէնեամի աշակերտն է:

<sup>5</sup> Գրիգոր Լուսատրիչն այս քաղաքի հովանատոր սուրբն է:

<sup>6</sup> Հ. Ղ. Ալիշան, Հայապատում. Պատմիչը եւ պատմութիւնը Հայոց, Վեմենիկ, 1901, Ա. Պատմիչը Հայոց, Հմր 58, էջ 85:

<sup>7</sup> Հմտ. Մաշտոցեամ Մատենադարանի ձեռ. 1511 (1471 թ.), էջ 499ա-500թ. «Տօն է մատին առաքելոյն Պետրոսի»:

<sup>8</sup> Հայապատում, Ա., էջ 85՝ «մեծաւ մասամբ»:

<sup>9</sup> Նոյն տեղում, Բ. Պատմութիւնը Հայոց, Հմր 234, էջ 295-299:

<sup>10</sup> Նոյն տեղում, Բ., էջ 295, ծ. 8:

«Պատմութիւն յաղագս մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի և բերմանն ի Հոռմէ ի Հայր» խորագորվ նոյն բնագրի մի այլ օրինակ կայ Մաշտոցեան Մատենադարանի 1315 համարի ձեռագրում<sup>11</sup>, որի հիման վրայ Գարեգին Ա Կաթողիկոս Յովսէփեանը հրատարակել է բնագրի սկզբի և վերջի հիշատակարանային՝ «պատմական տեսակէտով արժէքատր» մասերը: Խզարէլ Օժէի շամեկան ուսումնասիրութիւնը հիմնուած է այս վերջինների և Ալիշանի հրատարակութեան վրայ, սակայն վատահ ենք, որ թէ՝ Մաշտոցեան Մատենադարանի «Ծառընտիր» խորագրուած և դեռևս մանրամասն չնկարագրուած տասնեակ ձեռագրերի և թէ՝ հայերէն ձեռագրերի այլ հաւաքածուների մէջ կան այս հիմ և արժէքատր բնագրի այլ օրինակներ, որոնց հիման վրայ ապագայում արժէ պատրաստել նրա մանրակրկիտ քննական հրատարակութիւնը<sup>12</sup>:

<sup>11</sup> ԺԳ դար՝ 1265-1272 թթ., գրիչ Յովհաննէս Արքանդրայր և Թակոր, ստացող՝ Յովհաննէս Արքանդրայր, բնագիրն զբաղեցնում է 451 թերթանց ձեռագրի 2ա-5ը էջերը:

<sup>12</sup> Խնդրի կարեւորութիւնը ցուցադրելու հետ միաժամանակ, մուտքային այս շարադրամը նպատակ ուներ պարզաբանելու Խզարէլ Օժէի ուսումնասիրութեամ աղբիրագիտական հիմքը: